Այդ օրերից սկսած փոստատարը դադարեց բախել Եգեկյանների օջախի դուռը: Ընտանիքի համար սկսվեցին սպասումի եւ անորոշության դաժան օրերը, որոնք շարունակվեցին երկար տարիներ: Հարազատները երկու անգամ դիմեցին համադասախսն զինվորական մարմիններին՝ խնդրելով տեղեկություններ հաղորդել եւ երկու անգամն էլ պատասխան ստացան, որ կապիտան Կորյուն Եգեկյանը գրանցված է անհայտ կորածների ցուցակում: Շնայած դրան, որոնումները շարունակվում էին: Ընտանիքն ապրում էր այն հույսով, որ ի վերջո մի օր կդարձվի ճշմարտությունը:

Այդպես էլ եղավ, սակայն լուրը ստացվեց ոչ թե պատշառական մարմիններից, այլ Սավրոպոլի երկրամասի Մինեռալնիե Վոդի քաղաքի N 2 միջնակարգ դպրոցի ուսուցիչ Վասիլի Բելոռուսից: 1979 թ. հաղթանակի տոնի նախօրյակին, հանրապետության ռադիոն մի փոքրիկ հաղորդում էր տվել Հայրենական պատերազմում խորհրդային ռազմիկների՝ բշնամու թիկունքում գործած պարտիզանական խմբի հաջողությունների մասին:

Մինեռալնիե Վոդի քաղաքի դպրոցականները հայտնում էին, որ գտել են այդ խմբի անդամներից մեկի օրագիրը, պարզել նախկին ճակատայիններից շատերի անունները: Նրանք հերոսների բվում հիշատակում էին նաեւ կապիտան Կորյուն Եգեկյանի անունը, խնդրում նրա հարազատներին՝ արձագանքել: Դպրոցի պատանի հետախույզները, ձեռքի տակ ունենալով հավատի տեղեկություններ, օգնեցին բացահայտելու կապիտան Կ. Եգեկյանի դառը, բայց հերոսական ճակատագիրը:

Հայրենիքի զինվորի մարտական ուղին անցել է Ուկրաինայի մի շարք քաղաքներով ու գյուղերով: Այստեղ 1942-1943 թթ. բշնամու թիկունքում կազմակերպվում են բազմաթիվ պարտիզանական եւ դիվերսիոն խմբեր: Եվ դրանցից մեկը ռազմագերիների փախուստը կազմակերպելու համար ստեղծված հատուկ խումբն էր, որը կազմված էր Միության 20 ազգությունների ներկայացուցիչներից: Նրանք տղաներ էին՝ թվով 60 խիզախ, հանդարտ, անձնազոհ, խիստ կարգապահ եւ նվիրված մարդիկ: Գործելով բշնամու թիկունքում, նրանք հանդում էին երկաթուղիները, ոչնչացնում հակառակորդի կապի գծերը, ազատագրում գերության տարվող երիտասարդությանը: Նրանք գործում էին չափազանց ծանր պայմաններում:

Թշնամու հետ գոտեմարտում ընկան խմբի առաջին հրամանատար Պ. Կալուգինը, նրան փոխարինած Ա. Գուսեը, տղաներ՝ Ա. Տրեյկովը, Ն. Տուգանովը, Գ. Հակոբյանը, Վ. Շեխոնելիձեն եւ ուրիշներ:

Խիզախ մարտիկների սխրագործությունների մասին դյերը գիտեին: Նախկին ճակատայինի օրագրում արված գրառումներն օգնեցին բացահայտելու Մեծ հայրենականի հերոսական տարեգրության անհայտության մեջ մնացած եւս մեկ էջը: Այդ մասին հազարավոր ընթերցողներ իմացան ուկրաինական եւ սավրոպոլյան թերթերում Վասիլի Բելոռուսի տպագրած նյութերից: Իսկ նորահայտ փաստերը վկայում են, որ 1943 թ. սկզբներին խմբի ղեկավարն է դառնում նրա ամենաակտիվ կազմակերպիչներից մեկը՝ կապիտան Կորյուն Եգեկյանը, կոմիսարը՝ կիրգիզ Ասամբայ Իմանալիեւը: Նրանց ղեկավարությամբ խումբը ակտիվ գործողություններ է ծավալում ռազմագերիների ազատագրման ուղղությամբ Կիրովոգրադի մարզի Բոբրինեց, Նովոուկրաինկա, Զնամենկա քաղաքների, Կիեւի մարզի Բելայա Ցերկով քաղաքի եւ նրա մերձակա գյուղերի շրջանում, որտեղ գտնվում էին համակենտրոնացման ճամբարները:

Հայրենասերների համարձակ գործողությունները կասաղեցրել էին բշնամուն, որը դիմում էր բոլոր միջոցներին՝ վտանգավոր խումբը հայտնաբերելու եւ ոչնչացնելու համար:

Առանձնապես ծանր բախումներ եղան Բելայա Ցերկովի մատույցներում: Հիտլերականներն այդ քաղաքը վեր էին ածել մասսայական գնդակահարությունների եւ մահադաժի վայրի: Այդտեղ էին գտնվում համակենտրոնացման երեք ճամբար: Եգեկյանի խմբին հաջողվեց ազատագրել 120 տղաների եւ աղջիկների: 1943-ի հուլիսի վերջին Զնամենկա գյուղի մոտ ծավալված թեժ մարտերից մեկում զոհվեց անվեհեր կոմիսար, կապիտան Ասամբայ Իմանալիեւը: Մի քանի օր անց գեստապոյականները բռնեցին վերերից արյունահամ Միխայիլ Տուրբինկովին, Վլադիմիր Զոխոնելիձեին, Իվան Կուլկովին եւ ուրիշներ, որոնց տանջամահ արեցին գեստապոյի գնդաններում: Այդ անհավասար մարտում ծանր վիրավորվում է նաեւ Կ. Եգեկյանը, որը մարտնչում է մինչեւ վերջին փամփուշտը: Այդ մասին պատանի հետախույզներին գրել է խմբի անդամներից մեկը, որը ողջ է մնացել:

Հերոսների անունները հանգչում են Բելայա Ցերկով քաղաքի եղբայրական գերեզմանում, որն ուխտատեղի է դարձել հազարավոր ընտանիքների համար:

Եվ ահա, 1979-ի հունիսին Բելայա Ցերկովում հանդիպեցին մարտերում եղբայրացած երկու կապիտանների՝ Կորյուն Եգեկյանի եւ Ասամբայ Իմանալիեւի որդիները, որոնք գարնանային ծաղիկներով ծածկեցին հերոսի մահով ընկած հայրենիքի քաջարի պաշտպանների շիրիմը:

Ա. ԹԱՂԵՎՈՍՅԱՆ,

digitised by A.R.A.R.@

ԱՐԳ

Միջազգային

ՎԱՇԻՆԳՏՈՆ

Կրկի՞ն միջուկային փորձարկումներ

Ֆրանսիայի նորընտիր նախագահ Ժակ Շիրակը միանի օր առաջ հայտարարեց, թե իր երկիրը դադարեցված է վերսկսել Խաղաղ օվկիանոսի հարավային հատվածում միջուկային ստորջրյա փորձարկումները:

Միջուկային փորձարկումների վերաբերյալ նույնանման հայտարարությամբ հանդես է եկել նաև ԱՄՆ-ն:

Ինչպես հաղորդում է «Ազատություն» ռադիոկայանը, Միացյալ Նահանգների դաշտպանության նախարարության մի շարք դաշտոնյաների կատարած վերոհիշյալ հայտարարությունը հենց նախագահ Քլինտոնի վարչակազմում անհանգստության մեծ ալիք է առաջ բերել եւ բուռն քննարկումների դաշտնա դարձել:

Ինչո՞ւ են դաշտպանության նախարարության որոշ դաշտոնյաներ պնդում փորձարկումները վերսկսելու կարեւորությունը: Չէ՞ որ աշխարհի միջուկային տերությունները շատով որոշում են կայացնելու միջուկային բոլոր տեսակի փորձարկումները դադարեցնելու մասին: Այդ որոշումով ազդարարվելու է, այսպես կոչված, փորձնական դայթեցումների 47-ամյա դաշտության ավարտը:

Պետք է ասել, նշում է ռադիոկայանի մեկնաբանը, որ ԱՄՆ-ի Ենթադիտիկայի նախարարության ու զենքերի վերահսկման եւ զինաթափման հարցերով զորակալությունները դեմ են փորձարկումները վերսկսելու ծրագրին: Ծրագրին դեմ են նաև զենքերի վերահսկողությամբ զբաղվող անկախ փորձագետները: Նրանք գտնում են, որ ԱՄՆ-ի դաշտպանության նախարարության այդ դաշտոնյաների կողմից ներկայացված առաջարկն իր բնույթով կարող է ընդունվել որպես ծաղր ԱՄԿ-ի այն առաջարկի, որ որի 1996 թ. դեպք է արգելվեն միջուկային բոլոր տեսակի փորձարկումները:

Որոշ տեղեկությունների համաձայն, ԱՄՆ-ի դաշտպանության նախարար Ուիլյամ Փերրին եւ դեսական քարտուղար Ռոբերտ Քրիստոֆերը այս շաբաթ ենթարկվելու են ներկայացված առաջարկը, սակայն այդ առնչությամբ, հավանաբար, որեւէ որոշում չի կայացվի, որովհետեւ ծրագիրը դեռ խորհրդարանական քննության չի արժանացել: Իսկ կառավարությունը ռազմական վարությունից, իսկ միջուկային գերհզոր դեսությունները խոստանում են հաղթական զսպվածություն ցուցաբերել: Եվ զարմանալի չի լինի, շարունակում է մնկնաբանը, եթե միջուկային զենքերից զերծ դեսություններն այսօր կասկածանքով նայեն միջուկային զենքեր չտարածելու մասին միջազգային դայմանագրին:

Ինչպես այդ դեսությունների ներկայացուցիչներն են ասում, եթե միջուկային փորձարկումները վերսկսելու մասին առաջարկ են ներկայացնում գերհզոր միջուկային դեսությունները, արդա մի ջնջակարգ դեսությունները կարող են կասկածանքով նայել գերհզոր դեսությունների խոստումներին:

Միջուկային զենքերի փորձարկումներ առաջարկող ամերիկյան դաշտոնյաները, ԱՄՆ-ին արդարացնելու նպատակով, առաջարկում են, որ առայժմ միջուկային գերհզոր դեսություններին փորձարկումները վերսկսելու թույլտվություն տվի: Այսինքն Մեծ Բրիտանիային, Ռուսաստանին եւ Չինաստանին այս հարցի մեջ ներքաշելու միջոցով ԱՄՆ-ը ցանկանում է բերեւացնել մեղքի իր բաժինը: ԱՄՆ-ի դաշտոնյաների խարարությամբ դաշտոնյաները հայտարարում են, թե հարկավոր է սկսել միջուկային զենքերի փորձարկումները այդ զենքերի անվտանգության չափանիշները ուսումնասիրելու համար: «Հարկավոր է դարզել, տեսել են նրանք, թե արդյոք, չեն հնացել դրանք»:

Բայց միաժամանակ այդ նույն մասնագետները ընդունում են, որ փորձարկումները հնարավոր հակացվում են այն ժամանակ, երբ զգացվում է միջուկային նոր տիպի զենքեր արտադրելու անհրաժեշտությունը:

Ֆ. ՄՈՒՐԱՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ

Փարիզ. Բազմահազարանոց ցույց միջուկային փորձարկումների դեմ

Միջուկային փորձարկումների վերսկսման վերաբերյալ Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակի որոշման դեմ բողոքի բազմահազարանոց ցույց է տեղի ունեցել երեքշաբթի օրը Ֆրանսիայի մայրաքաղաքում: Ինչպես հաղորդում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակիցը, ցուցարարները հանդես են եկել միջուկային փորձարկումների լիակատար եւ համընդհանուր արգելման դահանջով: Ցույցին մասնակցել են հանուն խաղաղության եւ մարդու իրավունքների դայքարող մարդիկների շուրջ 60 կազմակերդությունների, էկոլոգիական կուսակցությունների ու շարժումների, Ֆրանսիայի արհմիությունների ներկայացուցիչներ: ԱՐՄԵՆՊՐԵՍ

Կորեա. Հարավը բրինձ կտա Հյուսիսին

Հարավային Կորեան առաջին անգամ հանձնել է 150 հազար տոննա բրինձ մատակարարել ԿԺԴՀ-ին, որը դարեցնի խիստ դակաս է զգում: Դայմանավորվածությունը այս մասին, ինչպես հաղորդում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը, ձեռք է բերվել հունիսի 21-ին Պեկինում կայացած երկկողմ բանակցություններում: Հուլիսին Հյուսիսային Կորեան որոշեց անհատույց օգնություն կստանա առաջին 50 հազար տոննա բրինձը: Եվս 100 հազար տոննա նրան կմատակարարվի մի փոքր ավելի ուշ, բայց արդեն առեւտրային գործարքների դայմաններով: Հաշվի առնելով Փենյանի արտաքին դայմանները, Սեուլը, ինչպես հաղորդվում է, համաձայնել է որոշ վճար ստանալ հյուսիսկորեական հումային ադրանքներ: ԱՐՄԵՆՊՐԵՍ

ՉԻՆԱՍՏԱՆ

Ծառայելու հրավեր արտասահմանում գտնվող գիտնականներին

Չինական կառավարությունը կոչ է հղել արեւմուտքում ադրող իր գիտնականներին եւ վերադառնալու եւ շարունակելու իրենց աշխատանքը, գրում է «Թեհրան թայմս» թերթն իր մայիսի 25-ի համարում, հենվելով Ֆրանսդրես գործակալության հաղորդումների վրա: Գիտական եւ տեխնիկական առաջընթացին զարկ տալու նդատակով Սինխուա լրատվական գործակալության հրադարակած դաշտոնական ընդարձակ փաստաթուղթը, իրագործելով կառավարության քաղաքականությունը, հրավիրում է օտար երկրներում գանգան դատճառներով ադատան գտած գիտնականներին՝ «ծառայելու հայրենիքին»:

«Մենք դետք է խրանենք մեծ թվով երիտասարդ ուսումնասիրողների, ինժեներների եւ տեխնոլոգիական աշխատողների աշխատանքը, տալով նրանց ավելի շատ առտնություններ եւ գործելու ազատություն», նշվում է այնտեղ:

Կառավարությունը նաեւ կոչ է արել համալսարաններին եւ կրթական այլ օջախներին ավելի առատաձեռն եւ բարեհամբույր լինել վերադարձող գիտնականների նկատմամբ:

Հաղորդագրության մեջ նշվում է, որ կառավարությունը 1980-ից ի վեր ավելի քան 200 հազար չինացիների է հովանավորել արտասահմանում իրենց ուսումը շարունակելու համար: Այդ թվից, որի մեջ չեն մտնում անձնական նախաձեռնությամբ երկրից հեռացողները, միայն 70 հազարն է վերադարձել հայրենիք: Մնացյալներից մի մասը շարունակում է մնալ արտասահմանում քաղաքական հանգամանքների դատճառով, մյուս մասը՝ դարզապես վայելելու ադրուստի եւ աշխատանքի ավելի լավ դայմանները: Ընդարձակ փաստաթղթի 40 կետերում շեշտված է այն կարեւոր միտքը, որ անհրաժեշտ է ստեղծել մասնավոր գիտաուսումնասիրության կենտրոններ: Պետությունն ի վիճակի չէ, ասվում է այնտեղ, հետագայում ֆինանսավորելու ուսումնական մեծ հատատությունները: Հ. Ե.

ՏԵՍԵՍՈՒԹՅՈՒՆ

Գերմանիան փայտ է արտահանում

Թեղեւ 20-դ դարի հայտնի ռազմական գործողությունների, ինչպես նաեւ համաշխարհային դատերազմների նախադող անտառդեղեն ազդեցության հետեւանքով դատմական Գերմանիայի անտառային ծածկույթը նվազել է շուրջ 50 տոկոսով, այնուամենայնիվ ներկայիս միացյալ Գերմանիայում այն զբաղեցնում է մոտ 107 հազար քառ. կմ, ինչը հավասար է նախկին ԳԴՀ-ի մակերեսին: Նույնիսկ Շլեզվիգ-Գոլշտեյնում, որը անտառների առումով Դաշնության ամենից ադքատ երկիրն է, խառը եւ փշատերեւ անտառները կազմում են տարածքի շուրջ 10 տոկոսը: Ընդհանրադես հարկ է նշել, որ Գերմանիան տարեկան մթերում է 30-40 մլն խմ փայտ, ինչը եւ վկայում է, որ առավել զարգացած այդ դետությունն աշխարհում փայտ արտահանող կարեւորագույն երկրներից է: 1975-ին Բունդեսթագն ընդունեց «Անտառային տնտեսության զարգացման եւ անտառի դահդանության» օրենքը, որի գլխավոր նդատակն էր անտառածածկույթի վերարտադրության ադահովումը: Այդդհանդերձ, 1980-ի սկզբին կրկին խիստ տրվեց «անտառային հարցը», եւ չնայած ձեռնարկված լայնածավալ միջոցառումներին, 1992-ի հաշվետվության մեջ միանշանակ նշվեց «դրության տագնաղալի» լինելու մասին:

Գիտադրանաբերական հեղափոխության հետեւանքով տրվեց նաեւ բնադաշտդանական խնդիրը. մինչդեռ հայտնի է, որ հենց անտառներն են «մոլորակի գլխավոր ֆիլտրը»: 1990-ին Գերմանիան ստիպված եղավ անցնել լրացուցիչ միջոցառումների ծրագրին, որի շնորհիվ հնարավոր կլիներ մի թե շատ բարելավել ինչպես էկոլոգիական իրավիճակը, նույնդես եւ «անտառային հարցը»: 1995-ի մարտի 28-ից ադրիլի 7-ը Բեռլինում կլոր սեղանի շուրջ էին հավաքվել աշխարհի առաջատար էկոլոգները. «Կլիմայի դաշտդանության հարցերին նվիրված» այդ գիտաժողովի մասնակիցներն ընդունեցին այսդես կոչված «Բեռլինյան մանդատը», որում կարեւորված էր անտառների դահդանության անհրաժեշտությունը: Ներ կայուն ադեն Գերմանիայում, լինի Բավարիայում թե Բադեն-Վյուրտեմբերգում, անտառահատման աշխատանքներն իրականացվում են ամենամոտ մեխանիկական եղանակով: Նույն օրինակով ծառը հատվում է փայտավերամշակման գործարաններ ոչ թե նախկինի դես բեռնատարներով, այլ ձիասայլերով: «Տեխնոգեն ազդեցությունը կարող է բացասական եւ բախտորոշ լինել մեր անտառների համար», նշեց մեր զրույցի ընթացքում Բավարիայի Բրյանտայ հաղամի բուրգոմիստր: Ավելացնենք միայն, որ անտառների եւ բնդհանրադես բնության նկատմամբ նման «նահապետական» մոտեցումը բնորոշ է նման բարձր զարգացած 16 երկրների: Ա. Գ.

ԹՈՒՐՔԻԱ

Տարվա սկզբից սպանվել է 1290 քուրդ ահաբեկիչ

Թուրքական հեռուստատեսությունը հաղորդում է, որ Հաքյարիի եւ Շիրնաքի շրջաններում անվտանգության ուժերի եւ քուրդ ահաբեկիչների միջեւ տեղի ունեցած զինված ընդհարումների հետեւանքով սպանվեց 6 ահաբեկիչ: Գործողությունների ընթացքում առգրավվել է 28 ավտոմատ հրացան, 3 գնդացիր, մեծ քանակությամբ փամփուշտ եւ 3,5 տոննա սննդամթերք: Այս ընթացքում արտակարգ իրադրության շրջանի դեկավար Ունալ Էրթանը լրագրողների հետ հանդիպման ժամանակ հայտարարեց, որ այս տարվա ընթացքում հունիսի 20-ի տվյալներով շարից հանվել է 1290 ահաբեկիչ,- նշելով, որ անցյալ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատ այդ թիվը 70 տոկոսով ավելի է:

Չիլլերը Փարիզում լավ է ընդունում

Թուրքական հեռուստատեսության հաղորդման համաձայն Եվրախորհրդի խորհրդարանական ասամբլեայի հերթական նիստի աշխատանքներին մասնակցելու համար մեկօրյա այցով Փարիզում էր գտնվում վարչապետ Թանսու Չիլլերը: Այլ հարցերի հետ միասին նիստում քննարկվում էր նաեւ Եվրոպական մաքսային միությանը Թուրքիայի անդամագրվելու խնդիրը: Խնդրո առարկայի առնչությամբ նիստում ելույթ ունեցավ եւ ներկաների համար ընդարձակ ու մանրամասն դարզաբանումներով հանդես եկավ վարչապետ Չիլլերը: Նա անդրադարձավ երկրի տնտեսական զարգացման ընթացքում տեղի ունեցող փոփոխությունների, ամրապնդման, ահաբեկչության դեմ մղվող դայքարի դրդապատճառների եւ ձեռք բերված հաջողությունների, քուրդհունական հարաբերությունների եւ կիպրոսի խնդրի հետ կապված խնդիրներին: Չիլլերի ելույթը նիստի մասնակիցների կողմից ուշադրությամբ ընդունվեց: Նիստի ավարտից հետո այցի շրջանակներում Չիլլերը առանձնազրույց ունեցավ Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակի եւ վարչապետ Ալեն Ժյուպեի հետ: Քննարկվեցին երկկողմ հարաբերությունների զարգացման եւ միջազգային հետաքրքրություն ներկայացնող մի շարք կարեւորագույն խնդիրներ: Նախագահ Ժակ Շիրակի հետ կայացած առանձնազրույցի ընթացքում վերջինս անդրադարձավ Թուրքիայում արգելված ժողովրդավարական կուսակցության 8 դեկավար անդամների ձերբակալման փաստին եւ առաջարկեց նրանց ազատ արձակել: Չիլլերը ըմբռնումով ընդունեց առաջարկը: Օրվա վերջում Փարիզում կազմակերպված մամլո ասուլիսին մասնակցելուց հետո վարչապետը վերադարձավ Թուրքիա:

Արաֆաթը Անկարայում դատվավոր դոկտոր դարձավ

20 ՅՈՒՆԻՍ, ՏԱՏ: Նախագահ Դեմիրելի դաշտոնական հրավերով երեկոյա այցով Անկարայում էր գտնվում Պաղեստինի Ազգային կազմակերդության առաջնորդ Յասեր Արաֆաթը: Անկարայում Դեմիրելի եւ մյուս դաշտոնյաների հետ հանդիպումների ընթացքում քննարկվեցին թուրք-դաղեստինյան հարաբերությունների հետագա զարգացման ու ամրապնդման խնդիրները: Այնուհետեւ Անկարայի Գազի համալսարանի ռեկտորատի հրավերով Արաֆաթը այցելեց համալսարան եւ հանդիպումներ ունեցավ դրոֆեսորադասախոսական անձնակազմի եւ ուսանողության հետ: Հանդիսավոր նիստում Արաֆաթին շնորհվեց դատվավոր դոկտորի գիտական աստիճան: Նույն օրն Արաֆաթը մեկնեց հայրենիք: Այնուհետեւ հեռուստատեսությունը հաղորդում է, որ նախագահ Դեմիրելը Անկարայի Շանկայա նստավայրում ընդունեց աշխատանքային այցով Թուրքիայում գտնվող Իրանի փոխարտգործնախարարին: Ընդունելության ընթացքում տարվեցին երկու երկրների համար փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր: Գ. Ջ.

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Դավիթ Ազարյան. Հանդիպում 6 տարի անց

Դավիթ Ազարյանի տրիոն նախկին ԽՍՀՄ-ում հայտնի խումբ էր, ճանաչում էին նաեւ արտասահմանում, մասնավորապես Գերմանիայում: 1989-ին տրիոն հրավերով մեկնեց ԱՄՆ, առաջին 5 համերգները Բոստոնում էին, այնուհետ Փրովիդենսի հայկական համայնքը հրավիրեց ելույթների: Դյուրախաղերը շարունակվեցին եւս 6 ամիս... Հետո ամեն ինչ սկսեց արագ հանդվել՝ Բելլինի դաշը, ԽՍՀՄ-ը, խումբը շարունակում էր ելույթները՝ մասնավորապես Սոլիտակի երկրաշարժին նվիրված տարբեր համերգներ, որոնցից նշանակալիցը Ատլանտիկ Սիթի-Լաս Վեգաս-Եվրոպա հեռուստակամուրջն էր: Ելույթ էին ունենում նշանավոր երաժիշտներ՝ Դայան Ռոր Վիկը, Մել Ֆորմը, Բլադ Ռիլլինքերոը, անուններ, որոնց հետ նույն բեմում ելույթ ունենալը երջանկություն էր:

ռաժշտությունը. իմ ստեղծագործությունները եւ դիսք է կատարի ամերիկյան «սանդարտներ»: Ի դեպ, յուրաքանչյուր ջազային երաժիշտ դիսք է անցնի այդ շրջանը, նվագի տարբեր գործեր, տարբեր երաժիշտների հետ: Սակայն սկզբում շատ դժվար էր, ոչ մեկը չէր կարող վստահեցնել իմ ընկերներին: Հենց այդ ժամանակ ես ծանոթացա Վիկիի հետ, հետո մենք ամուսնացանք:

Այդ շրջանում ես աշխատում էի Փրովիդենսում եւ աշխատում էի «Միթի լայթս» նոր ջազակումբում: Ինձ հետ աշխատող երաժիշտները Բոստոնից էին, ընդհանրապես Բոստոնի երաժշտական ջազային միջավայրը շատ բարձր դրակ ունի, թեկուզ հենց այն դրաստատով, որ այստեղ է գտնվում Բերկլիի նշանավոր երաժշտական դպրոցը:

Այս տարիների ընթացքում ԱՄՆ-ում աշխատել Բերկլիի դոկտոր, վարում կիթառահար Ջոն Բաքոյանի հետ, ինչպես նաեւ Քիմ Նազարյանի, որն աշխատում է «Նյու Յորք Սոյսիզ» խմբում: Երբեմն, երբ Նյու Յորքում եմ լինում, հանդիպում եմ Տաքեիկ Հովհաննիսյանին եւ ծանոթացա Փոլ Մորբնի (Մոտյան) հետ, որը նվագում էր հանրահայտ Բիլ Էվընս տրիոյում, եւ այսօր Նյու Յորքի երաժշտասերների կոմքն է, եւ ըստ երեւույթին իմ նոր սկավառակի գաղափարը կիրակացնացնեմ հենց նրա հետ: Ես հավատում եմ, որ կիրականանա այդ երազանքը: 7 ստեղծագործություն, որոնք կենսագրական են. ամեն գործը յուրահատուկ երաժշտական խնդիր ունի, որը 6 տարվա տաղանդսնի, որոնումի, ժիստմների արդյունք է, որի նմանը չկա: Գուցե սա հավակնոտ միտ է: Բայց խորհ այդպես է: Դասական կրթությունը, որը ես ստացել եմ, կլասիկը, որը անցել եմ, «Դվին» ռեստորանի 3,5 տարիները, այս ամբողջ ամբողջը, մանավանդ ստրեսով հարուստ միջավայրից հետո, արտահայտվում է այս ստեղծագործություններում, որն ունի մի ընդհանուր վերնագիր «Աղրելով ջազ-բալադում»:

Նյու Յորքի ջազային հասարակությունը շատ բարձր է, կա երբեմ անգամ դասական կտեսնեմ Հայաստանի հանրապետության բեմերում իր յուրօրինակ կատարումով:

ՊԱՅԱՐԵ
ՀՈՎԱՆԵՍՅԱՆ

ԳՐՈՂՆԵՐ

Մարկեսը հաղթահարում է Նոբելյան «մղձավանջը»

Ասում են, Նոբելյան մրցանակն ստանալուց հետո գրողները դադարում են ստեղծագործելուց: Միջազգային հանրաճանաչ վիպասան Գաբրիել Գարսիա Մարկեսը, որ «Նյուզուիք» հանդեսի հունիսի 12-ի համարի, կարդացել է լավագույնս ծերբազատվել այդ «մղձավանջից»: «Հարյուր տարվա մենությունից» հետո բավական երկար ժամանակ ոչ մի նշանակալի հատոր չձեռնարկած գրողն այժմ, վերադառնալով իրեն, հրատարակել է գեղեցիկ հյուսվածքով մի հոյակապ գիրք, որը կոչվում է «Սիրո եւ դիվային ոգիների մասին»: 147 էջանոց հատորի նյութ են ծառայել 18-րդ դարի այլասերված ազնվականությունը, ոգեկանչությունը եւ հաստավիզ խահանայի եւ 12 ամյա դեռատի աղջնակի անառողջ սերը: Դեպքերը կատարվում են Կարիբյանի ափերում: Եւ չնայած սկզբից, հենց առաջին էջից կարելի է դատել կերացնել, գրում է գրաքննադատը, գրի ողբերգական ավարտը, այնուամենայնիվ Մարկեսը մի անգամ եւս առացուցում է, որ կարեւորը ոչ թե իրադարձությունների վերջնական արդյունքն է, այլ այն, թե ինչպես են զարգանում այդ իրադարձությունները եւ ինչպես են «հերոսներն» իրենց դահում այդ ընթացքում:

Վեպը, հավատացնում է գրաքննադատը, լի է Գարսիա Մարկեսին հատուկ «մոգական ռեալիզմով»: Այնտեղ առկա են եւ սերվանտեսությունն ու կոդոդությունը, եւ գաղութարարությունն ու կրոնական մոլեռանդությունը եւ, իհարկե, նաեւ այդ բոլորի ավերիչ ներգործությունը հերոսների եւ նրանց հարաբերությունների վրա: Նա կարողանում է փաստերն ու առասպելները միահյուսել այնպիսի վարպետությամբ, որ գիրքը դարձնում է խիստ հետաքրքրական եւ հաճելի ընթերցանության համար:

Հ. Ծ.

ԿԱՊԵՐ

Հանդիպում դեսպանի հետ

Հունիսի 20-ին Հայաստանի Աճառյան համալսարանի դահլիճում տեղի ունեցավ Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Համիդ Ռեզա Նիֆարի եւ Իրանի մշակույթի նախարարի խորհրդական Մալեհի հանդիպումը դասախոսների բաժնի ուսանողների հետ:

Դեսպանի կարճ ելույթին հաջորդեցին ուսանողների հարցերը, որոնք հիմնականում վերաբերում էին Իրանի մշակույթին եւ երկու երկրների հարաբերությունների զարգացմանը:

Ուսանողների այն հարցին, թե արդյոք հնարավո՞ր է Հր. Աճառյան համալսարանն ավարտելուց հետո փորձառություն անցկացնել Իրանում, դեսպանը հույս հայտնեց, որ բոլոր հնարավորությունները կան դա իրագործելու եւ առաջարկեց համալսարանում ունենալ մամլո սենյակ, որտեղ ուսանողները հնարավորություն կունենան ծանոթանալ Իրանի դարբերական մամուլին:

Հանդիպումն անցավ ջերմ մթնոլորտում: Վերջում Հր. Աճառյան համալսարանի ռեկտոր Ա. Խաչատրյանը ուսանողներին տեղեկացրեց, որ այս տարվա սեպտեմբեր ամսին Իրանի «Ազատ» համալսարանի դասվիրակությունը կժամանի Հայաստան եւ Հր. Աճառյան համալսարանի հետ կկնքի մի դայմանագիր, որով նախատեսվում է ուսանողների փոխանակում:

ԱՆԱՀԻՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ,
Հր. Աճառյան համալսարանի
ուսանողուհի

ՖՐԱՆՍԻԱ

Երիտասարդների ոճորտաժների միջազգային փառատոն

Ա1 հեռուստաընկերությունը ներկայանում է համաշխարհային հանդիսատեսին

Արդեն հինգերորդ տարին է, ինչ Ֆրանսիայի Պոռ դը Բոռ քաղաքում կազմակերպվում է երիտասարդների ոճորտաժների միջազգային փառատոն, որ իրենց ֆիլմերն են ներկայացնում աշխարհի տարբեր ծայրերից 13-30 տարեկան ռեժիսորներն ու օպերատորներ, ինչպես նաեւ դարգացող սիրողներ:

Այդիկ ամսին Փարիզում արժանանալով մյուրիի դրական գնահատականին մասնակիցները բույլատվություն են ստանում հունիսի 22-25-ը ցուցադրվելու Պոռ դը Բոռում, դոկումենտալ կամ սիրողական կատեգորիայում հանձնվելով դոկումենտալ ռեժիսորների, օպերատորների, մոնտաժիստների «դասին»: Մրցույթը շահողներ արժանանում են ինչպես մյուրիի, այնպես էլ տարբեր միջազգային կազմակերպությունների մրցանակներին, ստանում են շահանշաններ. Ֆրանսիայում երկարաբյա ուղեւորության հնարավորություն, իսկ նրանց ֆիլմերը ցուցադրվում են Եվրոպայի գրեթե բոլոր հեռուստաալիքներով:

Փառատոնը ներկայացուցիչներ ունի աշխարհի մոտ 25 երկրներում Իտալիայում, ԱՄՆ-ում, Գերմանիայում, Պորտուգալիայում, Հնդկաստանում, Պերուում, նաեւ Հայաստանում:

Անցած տարի առաջին անգամ մի ջազային փառատոնին մասնակցում էր Հայաստանից Վարդան Պետրոսյանը իր «Թրեմ երեխաներին» ֆիլմով, որը ցուցադրվելով սիրողական կատեգորիայում, գրավեց 21-րդ տեղը: Այդ փառատոնի հետ Ֆրանսիան դեսպանատան մշակույթի գծով կցող Պատրիկ Տոնատեսյանի առաջարկով Վարդան Պետրոսյանը դարձավ Հայաստանում Պոռ դը Բոռի փառատոնի ներկայացուցիչը:

Այս տարի Հայաստանից իրենց ոճորտաժները ներկայացրեցին Ա1 անկախ հեռուստաընկերության Դայանե Փայլյան, Հովհաննես Հակոբյան եւ Անդրանիկ Մկրտչյան խումբը եւ Ստեփան Հաճյանը:

Ա1 հեռուստաընկերության աշխատակիցների երեք ֆիլմերից երկուսը «Ի՞նչ է նրանց տրամում» նվիրված աղեսի գոտու կրթօջախներին, եւ «Դատապարտված են կյանքի», որը ներկայացնում է Երեւանի կենդանաբանական այգու աղեսի վիճակը. Փարիզում իրավունք ստացան որոնք խոսխոսանք ցուցադրվել փառատոնի առաջին օր դոկումենտալ կատեգորիայում: Ֆիլմերը նկարահանվել են նախապես Ֆրանսիայից ուղարկված քսան բեմաններից ընտրված երկու բեմայով «Դոյրոցական դոկումենտ» եւ «Կղզի եւ կղզիաբնակներ»:

Ի դեպ, «Դատապարտված են կյանքի» ֆիլմը, որտեղ կենդանաբանական այգու վարչության բնակիչ կարիքը դատապարտում է իր հարեւանների մասին, առանձնակի ուշադրության է արժանացել Կլերմոնտաքաս ֆրանսիացիների կողմից. «Անհավատալի է, որ աշխարհի մի անկյունում դեռեւս գոյություն ունի այդպիսի վիճակում գտնվող կենդանաբանական այգի»:

Պոռ դը Բոռում ամենամյա միջազգային փառատոնի կազմակերմանն ու անցկացմանը օժանդակում են Ֆրանսիայի երիտասարդության եւ սպորտի նախարարությունը, Միացյալ Նահանգների նախագահ Բիլլ Քլինտոնը, ՅՈՒՆԵՍԿՕ, ՅՈՒՆԻՍԵՖ եւ այլ միջազգային կազմակերպություններ:

ՍԵՏԱԲՅԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱԹԵՆՔ

Հայաստանի բեմերը ապաստան են հունահայ դաշնակահարուհուն

Հունաստանի Արեմ քաղաքում ծնվել է Քրիստին Ամի Ֆոկալդյանը: 6 տարեկանից հաճախել է դաշնամուրի դասերի եւ աշակերտել Մանոլիս Կոկալիսին: 11 եւ 12 տարեկանում երկու անգամ մասնակցել է «Մարիա Կալլասի» դաշնամուրային համահունական մրցույթին, որտեղ մանուկ երաժիշտը շահել է առաջին եւ երկրորդ մրցանակները: Բարձրագույն երաժշտական ուսումնական տարիներին նա վեց տարի եղել է Պիերս Ֆոլեցի նվագախմբի առաջատարներից: 1988 եւ 1989 թթ. Քրիստին Ամին մասնակցել է մեկ այլ «Տրաքադուրներ» մրցույթին, երկու տարի անընդմեջ արժանանալով առաջին մրցանակի: Երկու տարի նա հաճախել է նաեւ հանրահայ ջութակահար եւ դիրիժոր Վիրոն Կոլասիսի դասերին եւ իր ելույթի երաժշտական ֆեսկոլտեսում: Հուսանք, որ մոտ ապագայում դասական կտեսնենք Հայաստանի հանրապետության բեմերում իր յուրօրինակ կատարումով:



ՊՈԼԻՆԱ
ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՄՆ դեսպանատունը հրավիրում է

Կիրակի, հունիսի 25-ին, ժամը 14.00, Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի հայ-ամերիկյան բարեկամության համերգ նվիրված անկախության 219-րդ տարեդարձին: Դիրիժոր՝ Ջոն Ռոբերտսոն: Հատուկ ուղերձով հանդես կգա Հայաստանում ԱՄՆ դեսպան Հարի Գիլմորը:

«ՏՐԱՆՍ-ԼԱՄԲՐՈՆ»
Ս Պ Ը

Ընկերությունը կազմակերպում է ավտոտրանսպորտով բեռների տեղափոխում հետեւյալ ուղղություններով

Երեւան-Իրան, Սիրիա, Թուրքիա, Արաբական Էմիրություններ, Քուվեյթ, միջինասիական հանրապետություններ եւ հակառակ ուղղություններով:

Զանգահարել
53-34-47, 53-75-06

digitised by A.R.A.R.@

Մարզական

ՇԱԽՄԱՏ

Էլինա Դանիելյանի հաջող մեկնարկը

Բելգրադում մեկնարկեց 5 շախմատիստուհիների մասնակցությամբ կանանց շախմատի աշխարհի առաջնության փնջային լրացուցիչ մրցաշարը: Ինչպես նշվել էր, արհեստական վիճակահանության շնորհիվ առաջին տուրում միմյանց հետ մրցեցին նույն երկրների ներկայացուցիչներ: Աշխարհի աղջիկների եռակի չեմպիոնուհի Էլինա Դանիելյանը հաղթեց Հայաստանի բազմակի չեմպիոնուհի Լյուդմիլա Ասլանյանին: Ոչ ոքի ավարտվեց Նիկոլիճ-Մախմոդովի հարավսլավական զույգի հանդիպումը: Ինչպես եւ ենթադրվում էր, այս շախմատիստուհիների մրցավիճը կարճատեւ եղավ, քանի որ նրանք լրացուցիչ ցուցանիշներով գերազանցում են մյուս մասնակիցներին եւ դեռ չեն լինի, եթե աղյուսակում կրկին հավասարություն լինի:

Հայաստանի ներկայացուցիչների մրցավեճում Էլինա Դանիելյանը, խաղալով սեւերով, արեւ բռնելով կենտրոնում, ուժեղ գրոհ ձեռնարկեց մրցակցի դիրքերի վրա եւ հասավ նյութական վճռական առավելության:

Տուրից անմիջապես առաջ կայացած բացման հանդիսավոր արարողության ժամանակ նյութեր ունեցան ՖԻԴԵ-ի նվերական 5-րդ զոնա նախագահ, ՀՀ շախմատի Ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Գագիկ Հովհաննիսյանը եւ Սերբիա-Հայաստան բարեկամության ընկերության նախագահ Բորա Մարկովիչը: Իսկ առաջին քայլը կատարելու իրավունքը տվեց Հարավսլավիայի կառավարության անդամ, դեսպանատար Տոմիցա Ռայչեւիչին:

Արարողությանը ներկա էին նաեւ Հարավսլավիայի հայկական համայնքի ներկայացուցիչներ, համայնքի ղեկավար Միորակ Վարդանեսյանի գլխավորությամբ: Երկրորդ տուրում Ասլանյանը սեւերով խաղում է Մախմոդովիչի հետ: Մյուս զույգը կազմում են Ջանջդավան եւ Նիկոլիչը: Մրցաշարի առաջատար Էլինա Դանիելյանը երկրորդ տուրում խաղից ազատ է: ■

ՍՈՒՄՈ

Կիսաստվածն ամուսնացավ

Նրա անունը Յոկոզունա Տականոհա է: Քաշը 125 կգ: Նա Ճապոնիայում մեծ մասսայականություն վայելող սումո մարզաձեւի չեմպիոն է եւ այս երկրում ընդունվում է կիսաստվածի փոխարեն: Օրերս, երբ Յոկոզունա Տականոհան ամուսնացավ, այդ արարողությունը Ճապոնիայում վերածվեց զրեթե ազգային տոնի: Նրա հարսնացուն նույնպես Ճապոնիայում հանրահայտ անձնավորություն է: Կեյկո Կոնոն ճապոնական հեռուստատեսության հաղորդավարուհի է:

ՎԹԱՐ

350 կմ/ժամ արագությամբ հարված դատին

Երբ «Ֆորմուլա-1-ի» «Մեծ մրցանակներ» վսանգավոր են եւ տարեցտարի խլում են մի քանի կյանք, «Ֆորմուլ Ինդի» անունը կրող մոյր մրցումները դակաս վսանգավոր չեն: Վերջերս Ինդիանապոլիսում տեղի ունեցած մրցումների առաջին իսկ վայրկեանին երկրորդ դարձվածքում ամերիկացի Սրեն Յոքսի «Լոլա» մակնիշի ավտոմեքենան 350 կմ/ժամ արագությամբ եւ անհայտ դատճառներով բախվեց դատին: 43 ամյա վարորդը ծանր վիճակում անմիջապես հիվանդանոց տեղափոխվեց, որտեղ գլխուղեղի բաղ վիրահատություն կատարվեց (արյունը կուտակվել էր ուղեղում): Սրեն Յոքսի վիճակը մնում է ծանր: Այս նկարը վկայում է հարվածի ուժգնությունը, որի հետեւանքով ավտոմեքենան երկու մասի է բաժանվել: Նկարում երեւում են մեքենայից դուրս մնացած Սրեն Յոքսի ոտքերը, իսկ ավտոմեքենայի առջեւի մասն ու անիվները լրիվ բաժանված են: Սրեն Յոքսից հետո ընթացող մեքենայի վարորդ Էդդի Չիվերը խոստովանեց, որ շատ է վախենալ վթարից ու երբ մահացու դեպք չի եղել, առաջ շնորհիվ միայն լավ ճակատագրի:



Գ. Ա.

ԽԾԱՆԿԱՐ

Բեկենբաուերի 50-ամյակին

Բոլոր ժամանակների աշխարհի լավագույն ֆուտբոլիստներից մեկի՝ Ֆրանց Բեկենբաուերի 50 ամյակի առթիվ սեպտեմբերին Մյունխենում կազմակերպվելու է մեծ հանդիպում համաշխարհային ֆուտբոլի աստղերի մասնակցությամբ, որոնց թվում կլինեն ֆուտբոլի արքա Պելեն, Դիեգո Մարադոնան, Յոհան Կրուիֆը, անգլիացիներ Բեքին Քիգանն ու Բոբի Չարլտոնը եւ ուրիշներ:

Ֆուտբոլային խժդժություններ Վարշավայում

Լեհաստանի մայրաքաղաքի «Լեգիա» մարզադաշտում տեղի ունեցած ֆուտբոլային հանդիպման ժամանակ մեծ իրարանցումներ եղան: «Կատովիցե» թիմի երկրպագուները ծեծկռտուք սարքեցին, որի հետեւանքով 100 ոստիկաններ լուրջ վնասվածքներ ստացան: Ասոպարկություն եղավ մարզադաշտն ընդհանրապես փակել:

Բարձր արդյունքներ

Թեքեւ ատլետիկայի աշխարհի առաջնությանը մեծին գրանցվում են անչափ բարձր արդյունքներ: Իսպանիայում տեղի ունեցած միջազգային մրցաշարում կուբացի էլվիս Կասադան եռացատկում ցույց տվեց 1797 սմ արդյունք, որը լավագույն ցուցանիշն է ընթացիկ մրցաշրջանում: Բրայան Ուելմանի (Բերմուդյան կղզիներ) արդյունքն է 1775 սմ:

Ռիկարդոն վերադառնում է հայրենիք

Բրազիլիայի հավաքականի եւ Փարիզի «Սեն Ժերմեն» թիմի խաղացող, աշխարհի չեմպիոն Ռիկարդոն ոտքի է վերադառնա իր նախկին թիմը՝ Ռիո դե Ժանեյրոյի «Ֆլումինենսեն»:

Աշխարհի առաջնությունը Հունաստանում

1997 թվականի թեքեւ ատլետիկայի աշխարհի առաջնությունը կայանալու է Հունաստանի մայրաքաղաք Աթենքում: Այդ մասին Գյոթեբորգում (Շվեդիա), որտեղ առաջիկա օգոստոսին տեղի է ունենալու այս տարվա առաջնությունը հայտարարել է թեքեւ ատլետիկայի միջազգային ֆեդերացիան: Հունաստանի վարչապետ Անդրեաս Պապանդրեուն իր «խորը գոհունակությունն» է արտահայտել որոշման առնչությամբ: Գրելով այս մասին, «Թեհրան թայմս» թերթը նշում է, որ հավակնորդ քաղաքների թվում եղել են Մադրիդը, Դելհին, Հելսինկին եւ Սենֆորդը (Կալիֆորնիա): Ավելացնենք, որ երկու տարի մեկ անցկացվող առաջնության անցյալ՝ 1993 թվի մրցումները կայացել են Շտուտգարտում (Գերմանիա): Հ. Օ.

Խաղից հրաժարվեցին

Բասկեսբոլի տղամարդկանց եվրոպայի առաջնության ընտրական փուլում վիճակահանության քմահաճույքով միմյանց հետ դեմ է հանդիպեին Բոսնիայի եւ Հարավսլավիայի (Սերբիա Չեռնոգորիա) հավաքականները: Բայց Բոսնիան, ի նշան վերջերս սերբերի կողմից Տուզլայի ռմբակոծության դեմ բողոքի, հրաժարվեց խաղից: Ըստ որոշ տեղեկությունների, նման որոշումը քաղաքական ճնշման հետեւանք է, քանի որ Բոսնիայի բասկեսբոլիստներն ուզում էին մասնակցել այդ կարեւոր հանդիպմանը:

Գավաթը իսպանացիներին

Իսպանիայի Լարիոս քաղաքի թեքեւ ատլետիկական թիմը Պորտուգալիայի Վիլա Ռեալ դե Սանտո Անտոնիո քաղաքում նվաճեց թեքեւ ատլետիկայի ակումբների եվրոպայի գավաթը:

ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

Հայաստանի հավաքականի շուտափելի առաջընթացը

Սիարոն Բոյաջյան
Փարիզ

ՖԻՖԱ-ն հրատարակել է ազգային հավաքականների մայիս ամսվա համաշխարհային դասակարգման ցուցակը, որում զգալի առաջընթաց է ունեցել Հայաստանի հավաքականը: Նախորդ ցուցակում Հայաստանի թիմը գրաղեցնում էր 144-րդ տեղը: Հիմա նրա անունը նշված է 133-րդ տեղում: Դա նշանակում, որ ընդամենը մեկ ամսում Հայաստանի հավաքականը 11 տեղով վեր է բարձրացել: Ուշագրավ է, որ այդ ցուցանիշը ՖԻՖԱ-ի դասակարգման ցուցակում ընդգրկված 178 երկրների հաշվարկում 2-րդն է: Լավագույն արդյունքը դրսեւորում է Սուդանին, որը 13 աստիճանով վեր է բարձրացել: 11 տեղով առաջընթաց է արել նաեւ Անգոլայի հավաքականը: Ինչ խոսք, Հայաստանի հավաքականը առաջխաղացումը դյուրանալավորված է Մակեդոնիայի հետ եղեւնյան հանդիպման արդյունքով, որն ինչպես հայտնի է, ավարտվեց ոչ-ոքի՝ 2-2: Ուսումնասիրելով դասակարգման ցուցակը, միանգամայն ակնհայտ է, որ Հայաստանի ազգային թիմը կարճ ժամանակում մտնի գոնե 100 լավագույնների շարքը: Համեմատության համար ասենք, որ նախկին ԽՍՀՄ հանրապետություններից Ռուսաստանը գրաղեցնում է 15, Լիտվան 61, Ուկրաինան 74, Լատվիան 76, Ուզբեկստանը 86, Վրաստանը 93-րդ տեղերը: Վրաստանի հավաքականն ապրիլ ամսվա համեմատ, առաջընթաց է արել 7 տեղով: Նույնիսկ ԽՍՀՄ տարիներին ոչ ֆուտբոլային համարվող հանրապետություններից Մոլդովան (114), Էստոնիան (116) Հայաստանից հավաքականից ավելի բարձր դիրք են գրավում: Բելառուսի հավաքականը 113-րդ տեղում է:

Կրկին ցուցակը գլխավորում է աշխարհի չեմպիոն Բրազիլիայի հավաքականը: Նրան հետեւում է աշխարհի փոխչեմպիոն Իտալիայի հավաքականը: 3-րդ տեղում է Իսպանիայի հավաքականը: Հայաստանի թիմի հետ եվրոպայի առաջնության ընտրական փուլում նույն խմբում ընդգրկված մյուս հավաքականները նշված են հետեւյալ դիրքերում. Դանիա 14, Բելգիա 18, Կիպրոս 66, Մակեդոնիա 81:

Ահա, ըստ դասակարգման, աշխարհի տասը ուժեղագույն հավաքականները.

1.	Բրազիլիա	66,05
2.	Իտալիա	62,23
3.	Իսպանիա	61,26
4.	Նորվեգիա	60,08
5.	Գերմանիա	59,97
6.	Շվեդիա	59,19
7.	Հոլանդիա	58,84
8.	Արգենտինա	57,61
9.	Մեքսիկա	57,54
10.	Իռլանդիա	56,89

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ

Գաբրիելայի գաղտնիքը

ԳԵՐՇԱՆ ԱՍԼԻԲԵԿՅԱՆ
Վալանս, Ֆրանսիա

Նրա մասին մեկ անգամ արդեն գրել ենք «Ազգում», բայց որոշեցինք մեկ անգամ էլ անդրադառնալ Գաբրիելային, հույս ունենալով, որ ընթերցողների գեղագիտական ճաշակը կբարձրանա դրանով:

Հիշեցնենք, Գաբրիելա Ռիսը գեղեցկուհի է, մարմնամարզության ոլորտի վարպետ եւ նախկին չեմպիոնուհի, որը Ատլանտյան օվկիանոսից այն կողմ հանրաճանաչ դիմի է, քանի որ MTV հեռուստակայանով առաջարարական մարմնամարզության հատուկ հաղորդաշար է վարում, որը մեծ մասնակցություն է վայելում ամերիկացիների մոտ, քանի որ այս երկրում շատերը մեծ խնդիրներ ունեն իրենց քաշը նորմալ վիճակում պահելու հարցում: Կանանց հանրաճանաչ Elle հանդեսում Գաբրիելա Ռիսն ամեն շաբաթ հոդվածներ է պատրաստում դարձյալ առողջարարական սպորտի վերաբերյալ: Nike մարզական հանրահայտ ընկերությունում նա զբաղվում է կանանց մարզական նոր կոշիկներ: Գաբրիելան սիրում է beach volley մարզաձեւը (ծովափնյա վոլեյբոլ), որի շնորհիվ նա իր 194 սմ հասակով գեղեցիկ մարմինը ցուցադրում է բազմահազար երկրպագուների: Ո՞րն է մարմինը գեղեցիկ պահելու Գաբրիելայի գաղտնիքը: Այն է, որ նա ամեն առավոտ երկու ժամ զբաղվում է մարմնամարզությամբ, մկաններն է մարզում եւ ծանրություններ բարձրացնում: Շաբաթը վեց օր եւ գրեթե ամեն կեսօրից հետո մի քանի ժամ beach volley է խաղում: Գիրանալու վտանգը հավանաբար չի սպառնում Հայաստանում ապրող կանանց, որոնց համար ամենամեծ սպորտն ընկա գնալն է եւ մեծ բեռնվածությամբ տան հասնելը:

Գաբրիելա Ռիսը

Բաժինը վարում է
ՍՈՒՐԵՆ ԲԱԳՐԱՏՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Օրվա հետքերով

ԱՆԿԱՐԱ

«Իրանի վրա հարձակումը վերջին պահին կանխվեց»

Կրկին Չիլլեր-Դեմիրել հակադրություն

«Հյուրիյեթ» օրաթերթի հունիսի 11-ի համարից տեղեկանում ենք, որ թերթի մեկ օր առաջ Էրբուդրու Օզքյուրի ստորագրությամբ տպագրված «Իրանի վրա հարձակումը վերջին պահին կանխվեց» հոդվածը երկրում մեծ արձագանք է առաջացրել: Հոդվածի առնչությամբ հրատարակվել է բանակի գլխավոր շտաբի հայտարարությունը, որ նշվում է, որ մշակվել է Իրանի դեմ ռազմական գործողությունների հստակ ոլորտ եւ դրա մանրամասները ներկայացվել են նախարարների կաբինետի քննարկմանը: Գլխավոր շտաբի հայտարարության մեջ նշվում է, որ հոդվածի այն մասը, որը վերաբերում F16 մակնիշի ռազմական օդանավերի օդ բարձրանալուց հետո կրկին իրենց բազաները վերադառնալուն, իրականությանը չի համապատասխանում:

Հոդվածագիրը անդրադառնալով իր նախորդ հոդվածին, շարունակում է. «Ես իմ նախորդ հոդվածում աշխատել եմ դարձրանել միջադեպի մանրամասները: Բայց չգիտես ինչու, բոլորի բերանները փակվել էին: Նախարարների կաբինետի անդամ կարեւորագույն նախարարներից մեկը միայն այսքանը ասաց. «Լուրը հավասի է: Իրանի հետ տեղի էր ունենալու շատ ցավալի միջադեպ: Բայց, բարեբախտաբար, մենք այդ մտից հրաժարվեցինք: Ես համաձայն չեմ հոդվածում արտահայտված այն մտքին, որ միջադեպը կանխել է արտգործնախարարության գլխավոր խորհրդական Օզդեմ Սանբերքը: Ճիշտ է, նա այդ հարցում մեծ ջանքեր գործադրեց, բայց հիմնականում միջադեպը կանխվեց մեկ ուրիշի կողմից»:

Իսկ ո՞վ էր այդ ուրիշը

Պարզվում է, որ չհաստատված տեղեկությունների համաձայն, այդ մեկ ուրիշը նախագահ Սուլեյման Դեմիրելն է, որը վերջին ոստիին մտնելով խաղի մեջ, կարողացավ գործողությունը ի չիք դարձնել:

Այժմ բոլորենք տարբեր ուղիներով մեզ հասած լուրերն ու առանձին առանձին քննենք միջադեպի հետ անմիջական կապ ունեցող մեր դեկավար այրերի դիմանկարները.

Էրդալ Ինոնյու: Որքան ես գիտեմ, արտգործնախարար Ինոնյուն այնքանի անձնավորություն է, որը դատահակասություններ չի սիրում եւ յուրահատուկ հարցի առնչությամբ հետ է մոտենում: Եւ ես հավատում եմ, որ այս միջադեպի հետ կապված շատ լուրջ եւ դրական բաներ է կատարել: Նույնը կարելի է ասել Օզդեմ Սանբերքի մասին:

Հիմմեթ Չերիկի: Նման հարցերում գոյություն ունի փոխվարչապետ Հիմմեթ Չերիկի ազդակը: Բայց մենք Հիմմեթ Չերիկին լավ ենք ճանաչում դեռեւս այն ժամանակվանից, երբ նա գլխավորում էր արտգործնախարարի դաշտոնը: Նա Ադրբեջանի, Սերբիայի եւ Հունաստանի հետ կապված հարցերում միշտ էլ հանդես է եկել որպես խնդամիտ դիվանագետ եւ ցուցաբերել է մեծ զգոնություն:

Թանսու Չիլլեր: Պարզվում է, որ ռազմական հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելու ընթացքում դրսեւորում է շտապողականություն, տարբերվում է:

Կարճ ասած, ես կարծում եմ, որ Իրանի վրա հարձակման ոլորտի հեղինակները են վարչապետ Թանսու Չիլլերն ու բանակի գլխավոր շտաբի պետ, գեներալ Իսմայիլ Հաքը Քարադային, իսկ նրանց դեմ գործել է Դեմիրել-Չերիկ-Ինոնյու բլոկը:

Ինչուիցն, կարեւորն այն է, որ այս միջադեպում հաղթեց ողջամտությունը: Այս բոլորից կարելի է եզրակացնել, որ կառավարության համակարգում չմտածված ռազմական որոշումներ կայացնելը դյուրին չէ եւ կապված է մի շարք դայմանների հետ: Ինձ թվում է, որ Իրանի հետ կապված այս վերջին միջադեպի ամենադրական արդյունքը դա է»:

Գ. Ջ.

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Երկօրյա ընդհանուր գործադուլ Անկարայում

20 ՀՈՒՆԻՍ. TRT: Թուրքիայի ղեկավարող հիմնարկների աշխատողների արհմիության կենտրոնական խորհրդի կոչով եւ անմիջական նախաձեռնությամբ Անկարայում սկսվեց ճյուղի աշխատողների երկօրյա ընդհանուր գործադուլը, որին մասնակցում են տասնյակ հազարավոր գործադուլավորներ: Նրանք դահանջում են աշխատավարձի բարձրացում, աշխատանքի դայմանների բարելավում, սոցիալական արդարություն եւ այլն: Քաղաքի մի շարք վայրերում ցուցարարների եւ ոստիկանության միջեւ տեղի ունեցան բախումներ: Շուրջ 60 մարդ կալանքի է ենթարկվել:

Ստացված տեղեկությունների համաձայն, ցույցեր եւ գործադուլներ են սկսվել նաեւ Ստամբուլում եւ երկրի մի շարք այլ քաղաքներում: Գործադուլը հետզհետե ընդունում է համազգային բնույթ:

■

ԴԱՎԻԹ

ՓԱՅԱՏԻՐԱԿԱՆ ԲԱՆԿԸ

ֆիզիկական անձանցից ընդունում է ավանդներ հետեւյալ տոկոսադրույքներով

ժամկետը	դրամ	ԱՄՆ դոլար
1 ամսով	2.5	1.5
3 ամսով	11.0	9.0
6 ամսով	25.0	20.0

■ նվազագույն ավանդի չափը դրամով 500000.00
ԱՄՆ դոլար 1000.00

■ «Դավիթ» բանկը երաշխավորում է Ձեր ավանդների ամբողջականությունը եւ հուսալիությունը:

Սպասում ենք Ձեզ հետեւյալ հասցեով՝
Երեւան, Հալաբյան 23, հեռ. 391140, 358946:

A STYLE

ՏԱՐԱՌՈՍ

Վրաստան. Ահաբեկչությանը մասն են վերին աստիճանները

ԹԲԻԼԻՍԻ, 21 ՀՈՒՆԻՍ, ՍՆԱՐՔ ԻՍՏՊԵՍ. Վրաստանի ժողովրդավարության վերածնունդ հիմնադրամի նախագահ Սուլիկո Խոբեիշվիլիի՝ հունիսի 20-ին Թբիլիսիում կայացված ասանությունը հանրաքեսությունում ահաբեկչության ալիքի շարունակությունն է, հայտարարեց Ազգային ժողովրդավարական կուսակցության առաջնորդներից Գեորգի Կոբախիձեն: Իր ասելով, ահաբեկչությունը երկրում գոյություն կունենա այնքան ժամանակ, քանի դեռ չեն բացահայտվել նմանօրինակ հանցագործությունները եւ չեն դատվել դրանց կազմակերդիչները: Կոբախիձեն նաեւ նշեց, թե մահափորձերը հասարակական եւ քաղաքական գործիչների դեմ, ամենայն հավանականությամբ, նախատրամադրվում են իշխանության վերին աստիճաններում:

Տաբունշչիկը Գագաուզիայի առաջին վարչապետ

ԲՈՒՆԵՎ, 21 ՀՈՒՆԻՍ, ՈՒԱ ՍՆԱՐՔ. Երեկ կոմբրատում տեղի ունեցավ Գագաուզիայի ինքնավարության առաջին բաբկան գործադիր իշխանության ղեկավար Գեորգի Տաբունշչիկի դաշտոնանկության արարողություն: Այդ առիթով Մոլդովայի նախագահ Միրչա Սնեգուրն իր ելույթում իրադարձությունն անվանեց դաշտական: Դա հնարավոր դարձավ մոլդովացիների ու գագաուզների փոխզիջման եւ քաղաքական հասունության շնորհիվ, ընդգծեց նախագահը: Այդ տարածքին հատուկ իրավիճակի տրամադրումը կրկին աղացուցում է, որ Մոլդովայում կարելի է խաղաղ ճանապարհով հարթել բոլոր տարաձայնությունները: Տաբունշչիկը դաշտանական ելույթում նշեց, որ Գագաուզիան-Մոլդովայի կազմում կփորձի մերձենալ ԱՊՀ երկրների հետ, սեղծել նոր աշխատատեղեր, կդայքարի հանցագործությունների դեմ:

«Պարբերական» հրատարակչության տպարան.

«Գլխավոր» կառավարման համալսարանը հայտարարում է 1995-96 ուս. տարվա գերեկային ուսուցման ընդունելություն

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից առաջիկը արտոնագրված համալսարանը նոպատակ ունի դատրաստել միջազգային հարաբերությունների, միջազգային ժուռնալիստիկայի, միջազգային իրավական, իրավագիտության, դետական շինարարության, ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի, ինչպես նաեւ հասատեղ գործող հիմնարկ-ձեռնարկությունների եւ կոոդերատիվ կազմակերդությունների համար ժամանակակից դահանջները բավարարող բարձրակարգ կադրեր հետեւյալ մասնագիտությունների գծով:

1. Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ

Մասնագիտությունները

1. Միջազգային հարաբերություններ: Մասնագետի որակավորումը՝ միջազգայնագետ: Ուսման տեւողությունը՝ 5 տարի:

2. Միջազգային ժուռնալիստիկա: Մասնագետի որակավորումը՝ ժուռնալիստ-միջազգայնագետ: Ուսման տեւողությունը՝ 5 տարի:

2. Միջազգային իրավական ֆակուլտետ

Մասնագիտությունը՝ իրավագիտություն: Մասնագետի որակավորումը՝ իրավաբան-միջազգայնագետ: Ուսման տեւողությունը՝ 5 տարի:

3. Իրավաբանական ֆակուլտետ

Մասնագիտությունը՝ իրավագիտություն: Մասնագետի որակավորումը՝ իրավաբան, դատարասվում են կադրեր.

ա/ դետական իրավական

բ/ տնտեսական իրավական

գ/ քննչական եւ դատական (դատախազական) մասնագիտացումներով: Ուսման տեւողությունը՝ 5 տարի:

4. Կառավարման (մենեջմենթի) ֆակուլտետ

Մասնագիտությունը՝ մենեջեր: Մասնագետի որակավորումը՝ տնտեսագետ-մենեջեր: Պատրաստվում են կադրեր.

ա/ արտադրության մենեջմենթ

բ/ ծառայությունների ոլորտի մենեջմենթ

մասնագիտացումներով: Ուսման տեւողությունը՝ 4.5 տարի:

5. Ֆինանսիստ բիզնեսմենի ֆակուլտետ

Մասնագիտությունը՝ ֆինանսներ եւ վարկ: Մասնագետի որակավորումը՝ տնտեսագետ-ֆինանսիստ: Պատրաստվում են կադրեր

ա/ ֆինանսներ

բ/ բանկային գործ

մասնագիտացումներով: Ուսման տեւողությունը՝ 4.5 տարի:

6. Մարքեթինգի ֆակուլտետ

Մասնագիտությունը՝ մարքեթինգ (տուկայագիտություն) Մասնագետի որակավորումը՝ տնտեսագետ-տուկայագետ: Ուսման տեւողությունը՝ 4.5 տարի:

Միջազգային հարաբերություններ, միջազգային ժուռնալիստիկա, միջազգային իրավական մասնագիտությունների համար օտար լեզուների ուսուցումը բոլոր հինգ տարիներին դատարասիր է: Լեված մասնագիտությունների ուսանողները օտար լեզուներից հանձնելու են ավարտական քննություններ, որոնց կտրվի դիպլոմ «օտար լեզվի իմացությամբ»:

Այուս մասնագիտությունների գծով ուսանողների համար օտար լեզուների ուսուցումը դատարասիր է միայն առաջին կուրսում:

Հաջորդ կուրսերում օտար լեզու (լեզուներ) սովորելու ցանկություն հայտնողները կամավոր սկզբունքով կարող են սովորել ուսման բոլոր տարիների ընթացքում, որոնց թվում, ավարտական քննությունից դրական գնահատվելու դեպքում կտրվեն դիպլոմներ «օտար լեզվի իմացությամբ»:

Ուսուցումը վճարովի է: մեկ տարվա ուսման վարձը կազմում է 250 դոլար, որի վճարումը կատարվում է դրամով ըստ համադատասխան կուրսի: Ուսման վարձը կարելի է մուծել կանխիկ կամ փոխանցման կարգով:

Դրամի կուրսի էական փոփոխման դեպքում համալսարանը իրեն իրավունք է վերադահում փոխել ուսման վարձի չափը:

Ուսանողները համալսարանի աղմինիստրացիայի համաձայնությամբ ուսումը կարող են հատատեղել աշխատանքի հետ լրիվ աշխատանքային օրով կամ բաբաթով: Հեռավոր շրջաններում բնակվող ուսանողները, որոնք տարբեր դատճառներով չեն կարողանա հաճախել ամենօրյա դասերին, կծանոթացվեն որդես ազատ ունկնդիրներ, որոնց մասնակցությունը շաբաթվա բոլոր դասերին դարտադիր չէ:

Համալսարան կարող են ընդունվել միջնակարգ, միջնակարգ մասնագիտական, բերի բարձրագույն եւ բարձրագույն կրթություն ունեցող քաղաքացիներ:

Բարձրագույն կրթություն ունեցող դիմորդները կարողեն ընդունվել երկրորդ մասնագիտություն սանալու համար, որոնք ավարտած բուհի առաջին կուրսի եւ ընդունվելու համար ցանկություն հայտնած մասնագիտության առաջին կուրսի առարկաների տարբերությունները հանձնելուց հետո կհրամանագրվեն որդես երկրորդ կուրսի ուսանող:

Հիմնարկ-ձեռնարկությունները, կազմակերդությունները, կոոդերատիվները կարող են նոդատակային կարգով գործուղել դիմորդներին դարտավորվելով վճարել նրանց ուսման վարձը փոխանցելով այն համալսարանի ընթացիկ հաշվին:

Համալսարանը բարեգործական նոդատակներով կրնդունի որբանոցի եւ աղեսի գոտու ծնողազուրկ երեխաներ եւ սպիտակահայ կարիքավոր երկու երեխաների դատարավորվելով վճարել կրթաթոշակ եւ աղահովել հանրակացարանով:

Փաստաթղթերի ձեւակերդման եւ ընդունելության քննություններին մասնակցելու համար դիմորդները վճարում են 2500 դրամ, որը, անկախ արդյունքից, չի վերադարձվում:

Ընդունելության ժամանակ նախադատվությունը կտրվի

ա/ բարձր գիտելիքներ դրսեւորած դիմորդներին

բ/ հավասար արդյունքների դեպքում՝ հիմնարկ-ձեռնարկություններից, կազմակերդություններից գործուղված անձանց, ինչպես նաեւ նրանց, ովքեր, ըստ իրենց աշխատանքի բնույթի, կարիք ունեն տեսական եւ գործնական գիտելիքների:

Դիմորդների ընդունելությունը կատարվելու է քննությունների արդյունքների հիման վրա հետեւյալ առարկաներից՝ ա/ Միջազգային հարաբերությունների, միջազգային ժուռնալիստիկայի, միջազգային իրավական, իրավաբանական ֆակուլտետներում

1. Հայոց լեզու (ռուսաց լեզու) - բերանացի
2. Օտար լեզու (ըստ ատեստատի) - բանավոր
3. Հայոց դատմություն - բանավոր

բ/ Կառավարման (մենեջմենթի), ֆինանսիստ-բիզնեսմենի, մարքեթինգի ֆակուլտետներում

1. Հայոց լեզու (ռուսաց լեզու) - բերանացի
2. Մաթեմատիկա - գրավոր
3. Օտար լեզու (ըստ ատեստատի) - բանավոր

Միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունները եւ միջնակարգ դդրոցները գերազանցությամբ ավարտածները համալսարան կընդունվեն հարցազրույցով:

Արդյունքով անցած դիմորդները կհրամանագրվեն որդես առաջին կուրսի ուսանողներ 15 օրվա ընթացքում համալսարանի ընթացիկ հաշվին ուսման վարձը մուծելուց հետո: Ուսման գերազանցիկները կատանան կրթաթոշակ:

Համալսարանը կնկված դայմանագրերի հիման վրա կարող է սովորելու ուղարկել այդ բվում ասպիրանտուրայում, Մոսկվայի միջազգային հարաբերությունների ինստիտուտի եւ Մոսկվայի տնտեսագիտական ակադեմիայի համանման ֆակուլտետներ:

Համալսարանի դիմորդները դետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը՝ դիմում, միջնակարգ կրթության վկայական (բնօրինակ), միջնակարգ մասնագիտական կրթության դիպլոմ (դատճենն նոտարական վավերացումով), բժշկական տեղեկանք (ձեւ թիվ 086), անձնագիր եւ զինգրքույկ, 6 լուսանկար (3.4 սմ չափի): Փաստաթղթերը ներկայացվում են դիմորդի կողմից անձամբ:

Դայմանագրային հիմունքներով գործադած կազմակերդությունները, համաձեռ գործող կազմակերդությունները եւ ձեռնարկությունները, կոոդերատիվները տալիս են դարտավորագիր իրենց կողմից հատկացված ուսման վարձի չափի եւ այն ժամանակին վճարելու վերաբերյալ, որը դետք է հաստատված լինի տնօրենի ստորագրությամբ եւ կնիքով:

Ակադեմիական ցածր առաջադիմության, ուսանողին ոչ վայել վարագիծ դրսեւորած ուսանողներին համալսարանից հեռացնելու դեպքում ուսման վարձը չի վերադարձվում:

Համալսարանը ավարտած ուսանողները կստանան բարձրագույն կրթության դիպլոմ:

Դիմորդների փաստաթղթերի ընդունումը կատարվելու է հայտարարությունը տալու օրվանից ամեն օր, ժամը 11-17 ը. բացի կիրակի օրերից, մինչեւ օգոստոսի 20 ը:

Ընդունելության քննությունները տեղի կունենան օգոստոսի 21-28 ը:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել համալսարանի գործեր ընդունող հանձնաժողովին հետեւյալ հասցեով՝ Երեւան, Մաշտոցի 33: Հեռախոսներ՝ 53-06-03, 53-42-05, 53-57-18

Համալսարանի հաշվարկային հաշիվն է 3461166, ԵՐԲԱՆԻ Առաքելի երջանի դետական առանձնացված բանկ, կոդ 370101544

Համալսարանի խորհուրդ

Երեւան 23, Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65. Դասիլ 69149. Պատուր 1864 Տպաքանակը 7000 Ստորագրված է տպագրության 21. 06. 1995 Գինը 40 դրամ

digitised by A.R.A.R.@